Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Արժեքային համակարգի ձևավորումը «Մայրենի»,«Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասավանդման ընթացքում

Կատարող՝ Գոհար Ավետիսյան

Դպրոց՝ Հ.Ավետիսյանի անվան թիվ 74 հիմնական դպրոց

Առարկա՝ գրականություն

Կազմակերպություն՝ «Կրթություն առանց սահմանների»

Հ/Կ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն.....4

Գրականության
ակնար:Արժեքներ.....5

Ազգային և համամարդկային արժեքների
հարաբերակցությունը և կարևորությունը նոր
սերունդների դաստիարակության գործում----------10

Ազգային և համամարդկային արժեքների դրսևորումը
«Սասնա ծռեր էպոսում»..... 10

Եզրակացություն.....15

Գրականության
ցանկ.....17

Գրականության ցանկ

1.Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործում, Երևան 2002թ:

2. Սարգսյան Ա.Հ., Մշակութային տեսություն, Երևան 2003:

3. Երևանի պետական համալսարան,Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր,Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016:

4. Սարգսյան Ա.Ա. Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում, ԵՊՀ, հոդված,Իջևան, 2019:

5. Հենրիկ Բախչինյան,Սերգեյ Սարինյան,Հրանտ Թամրազյան ,Հայ գրականություն , Երևան ,2000թ.

6.«Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր,Երևան 1981թ.

Ներածություն

Հետազոտական աշխատանքը կրում է «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը «Գրականություն» առարկայի դասավանդման ընթացքում» վերնագիրը: Թեման ընտրելիս հաշվի եմ առել թեմայի արդիականությունը և ժամանակակից հասարակության առջև ծառացած մի շարք կարևորագույն խնդիրներ: Արդի հասարակության համար կարևորագույն խնդիրներից է բարոյական, ազգային-հասարակական նորմերի ճիշտ արժևորումը, ազգային դիմագծի պահպանումը,նոր սերունդների գիտակցության մեջ այդ նորմերի ամրակայումը և դաստիարակության գործում դրանց կիրառումը:Յուրաքանչյուր ոք, ով ուսուցչի բարձր կոչմամբ մուտք է գործում կրթական միջավայր, գիտակցում է՝ ունի իր ուսերին դրված առաքելություն՝ այն է կրթելու և դաստիարակելու հայրենիքին և պետությանը արժանի, պատվախնդիր, բարոյական, ազգային և ավանդական արժեքները համամարդկային արժեքների համադրմամբ առաջնային և բարձր պահող անհատներ:Յուրաքանչյուր անձի արժեքային համակարգի ձևավորման հիմքում դրվում է ճշմարտությունը և սերը: Ի սկզբանե երեխայի մեջ պետք է սերմանել սեր հայրենիքի,ազգի, հավատի,ընտանիքի,ազգային արժեքների նկատմամբ, իսկ ժամանակի ընթացքում այդ սերը պետք է մեծացնել և ավելացնել,հասցնել գիտակցական ամենաբարձր մակարդակին: Այդ ամենի համար պետք է կարևորագույն բոլոր արժեքները սինթեզվեն և դառնան կուռ ամբողջություն: Կարևոր արժեք է համարվում ճշմարտությունը, հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք գոյացնում են անձի ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին , դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը և դառնում բնականոն գոյության և անխափան զարգացման երաշխիքը: Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող որակական և բովանդակային բազմաթիվ փոփոխություններ կարծես մարտահրավերներ են ստեղծում արժեքային համակարգում՝ կշեռքի մի նժարին դնելով ազգային -ավանդական արժեքները, մյուսին՝ համամարդկային արժեքները:

Գրականության ակնարկ `
Արժեքներ

Պատմությունը և գրականությունը ժողովրդի հավաքական հիշողությունն են, նրա կենսագրությունը: Եթե պատմությունը ժողովրդի անձնագրային կենսագրությունն է, ապա գրականությունը,մասնավորապես «Սասնա ծռեր» էպոսը ,նրա գեղարվեստական պատմությունն է: Հայ ժողովուրդն աշխարհի հնագույն ժողովուրդներից է: Նա պատմական ասպարեզ է իջել անհիշելի ժամանակներից և անցել զարգացման բարդ ու դժվարին, բայց և փառավոր ու հերոսական ճանապարհ:Գալով հազարամյակների խորքերից՝հայ ժողովուրդը կերտել է խիզախումներով ու մաքառումներով, կորուստներով ու ձեռքբերումներով, մտքի թռիչքներով ու արարումներով լի հարուստ պատմություն ու մշակույթ[1] :

Հայի ամբողջական կերպարի,ազգային նկարագրի,նրա բարոյական արժեքների,ինքնատիպ մտածողության,գոյապայքարի,ապրելու իրավունքը հաստատելու մի ամբողջական և յուրօրինակ կտավ է,գեղարվեստականի և պատմականի ինքնատիպ սինթեզ է մեր դյուցազներգությունը:Ուրիշ ոչ մի ստեղծագործության միջոցով այդքան համակողմանի և ամբողջական չես կարող տեսնել ցանկացած ազգի պատմական,ազգային և բարոյական նկարագիր,որքան յուրաքանչյուր ժողովրդի էպոսի միջոցով, արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի, բացահայտել նրա անձնային որակները,ապահովել սեփական ներուժին համապատասխան:

---

1 Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր,ԵՊՀ, Երևան, 2016թ.էջ236:

Գրական հարուստ ժառանգության իմացությունն ու յուրացումը ամեն մի հայի, Հայաստանի հանրապետության ապագա քաղաքացու պարտականությունն է:Հայ գրականության դասավանդման հիմնական նպատակներից են՝ սովորողին հիմնարար գիտելիքներ տալ հայկական քաղաքակրթության մասին ,զարգացնել սովորողի ճանաչողական , սոցիալական և անհատական կարողություններն ու հմտությունները,ամրապնդել սովորողի հարգանքն ու հպարտությունը հայրենիքի,սեփական պատմության , ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ ,դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի, բացահայտել նրա անձնային որակները,ապահովել սեփական ներուժին համապատասխան ուսումնական, աշխատանքային և գործունեության այլ տեսակների մեջ նրա մասնակցությունը: Առարկայի դասավանդման գլխավոր խնդիրն է՝ ազգային և համամարդկային արժեքների իմացության և արժևորման միջոցով նպաստել աճող սերնդի ազգային նկարագրի ամբողջացմանը: Հետևաբար ,մնում է պարզել՝ ինչ են իրենցից ներկայացնում արժեքն ու արժեհամակարգը:

Արժեքն ինչ-որ բանի կարևորությունը, նշանակությունն ու օգտակարությունն է: Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ: Արժեքը աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա: Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են ՝ հավատն ու սերը: Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու: Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար: Մարդիկ քանի դեռ ապրում են, հավատում են, քանի դեռ հավատում են, ապրում են: Սերը մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է: Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները: Այն բաղկացած է մի քանի մակարդակներից՝ այլասիրություն և եսասիրություն: Այլասիրությունը ուրիշին սիրելու, իսկ եսասիրությունը սեփական անձը սիրելու երևույթն է:Նաև կան սիրո առանձնացված դրսևորումներ:Օրինակ սերը անհավասարների միջև, երբ միայն

տալիս ես՝ առանց վերադարձի ակնկալիքի: Սիրո այդ ձևն անվանում են մայրական: Հաջորդը սերն է հավասարների միջև, երբ ինչքան տալիս, նույնքան ստանում ես: Օրինակ՝ եղբայրական սերը:
Հաճախ արժեք է համարվում ճշմարտությունը, հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս: Ճշմարտությունը միայն որոշակի սոցիալ-մշակութային պայմաններում է ձեռք բերում արժեքային նշանակություն, իսկ գոյաբանական և իմացաբանական իմաստներով ըմբռնված ճշմարտությունը արժեքաբանորեն չեզոք է: Կյանքում հաճախ ճշմարտությունը զոհաբերվում է արժեքներին: Արժեքները բավարարում են սուբյեկտի կենսական պահանջմունքները և իմաստավորում են կյանքը: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք գոյացնում են անձի ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության ու անխափան զարգացման երաշխիքը: Ազգին հատուկ արժեքներն արտացոլվում են նրա ինքնագիտակցությանը տարբեր ձևերում՝ արվեստի, փիլիսոփայության, բարոյականության, կրոնական պատկերացումների, բանահյուսության մեջ: Ազգի արժեհամակարգը պետք է յուրացնի յուրաքանչյուր անհատ՝ հանրության մեջ բնականոն գործելու համար: Այսպիսով անհրաժեշտ է տարբերակել արժեք-միջոց և արժեք-նպատակ հասկացողությունները. Օրինակ՝ <<իշխանությունը>> մի բան է որպես միջոց, մեկ այլ բան՝ որպես նպատակ, նմանապես փողը և փառքը: Երբ իշխանությունը, փողն ու փառքը դառնում են անձի գերագույն արժեք, դա հիվանդագին և ախտածին երևույթ է, մինչդեռ որպես միջոց՝ դրանք համարվում են կյանքի ընդունելի ու անհրաժեշտ տարրեր:Արժեքները ընդհանուր համոզմունքներ են, որ անհատն ունի այն ցանկալի նպատակների վերաբերյալ, որոնց պետք է ձգտել կյանքում: Դրանք գործողության շարժառիթ են և նաև ծառայում են որպես ուղենշային սկզբունքներ՝ որոշելու , թե ինչպես գործել: Արժեքների ավելին են, քան կոնկրետ գործողությունները և համատեքստերը, և դրանք ունեն նորմատիվ հրահանգավորման բնույթ՝ ներկայացնելով, թե ինչ է պետք անել կամ մտածել բազմաթիվ տարբեր իրավիճակներում: Արժեքները չափանիշներ կամ չափորոշիչներ են առաջարկում՝ այլոց գործողությունները գնահատելու, կարծիքները , մոտեցումներն ու վարքը հիմնավորելու, այլընտրանքներից որևէ մեկն ընտրելու, վարքագիծը պլանավորելու և այլոց վրա ազդելու համար:

Առանձնացնենք նաև արժեք-արժանիքները, որոնք անձի համար ոչ միայն կենսականորեն անհրաժեշտ բարիք են, այլ նաև ցանկալի հատկություն: Արժեք-արժանիքների ըմբռնումը կարևոր է <<անհատ-ազգ>> փոխհարաբերությունների կարգավորման առումով: Բոլոր անձնային հատկությունները հանդիսանում են տվյալ անձի արժանիքները, մասնավորապես <<հաստատակամություն>>,<<աշխատասիրություն>>, <համբերատարություն>> և այլն: Պետք է տարբերակել ազգային արժանիքներ հասկացողությունը, որում առանձնանում է ազգային-պետական միաբանության ապահովումը: Միաբանության ապահովման մեջ վճռորոշ դեր են խաղում երեք հիմնական արժեք-արժանիքներ՝ արժանապատվություն,արդարամտություն, աշխատասիրություն:Արժանապատվությունը սեփական <<Ես>>-ի արժեքի գիտակցումն է: Դա անձի վարքի, արարքների, իրավունքների գնահատականն է, անձի ինքնագնահատականը:

Ազգային արժանապատվությունը սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ:

Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է: Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապա արադատությունը հարգանքն է ուրիշների հանդեպ: Այսպիսով արդարամտությունը ոչ միայն անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա, այլ նաև ազդում է դրա վրա: Աշխատասիրությունը աշխատանքի հանդեպ անձի դրական վերաբերմունքն է: Այն բացառիկ կարևորություն ունի և առաջընթացի գլխավոր նախադրյալն է: Վերը նշված արժեք-արժանիքները խիստ փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է որևէ էական խնդրի առաջացման:Յուրաքանչյուր ազգի կայունության և անկախության կարևոր երաշխիքն է ճիշտ ազգային- արժեքային համակարգի ստեղծումն և պահպանումն է:

Ազգային արժեքային համակարգի գլխավոր նպատակը կայացած անհատներ դաստիարակելն է:Օրինակ՝ ինչ-որ մեկը կարող է պատասխանատու, ինքնաբավ և քաղաքականապես քաջատեղյակ քաղաքացի լինել տոտալիտար դիկտատուրայի պայմաններում, եթե նրա դատողությունների , որոշումների և գործողությունների հիմքում համաժողովրդական արժեքների շարք է դրված: Այսպիսով՝ այս շրջանակի մոդելում պարունակված արժեքներն ընկած են ժողովրդավարական կարողությունների անմիջապես սրտում և առանցքային

նշանակություն ունեն այդ կարողությունների բնութագրման համար: Արժեքների մի մեծ խումբ հիմնված է այն ընդհանուր համոզմունքի վրա , որ բոլոր անհատներն ունեն հավասար արժեք ու հավասար արժանապատվություն , հավասար հարգանքի արժանանալու և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նույն շարքից օգտվելու իրավունք , և պետք է համապատասխան վերաբերմունքի արժանանան: Այս համոզմունքը ենթադրում է, որ մարդու իրավունքները համամարդկային են, անօտարելի ու անբաժանելի և առանց տարբերակման տարածվում են բոլորի վրա :Մարդու իրավունքներն ապահովում են պաշտպանությունների նվազագույն շեմ, որը շատ կարևոր է մարդկանց՝ արժանապատիվ կյանքով ապրելու համար, և մարդու իրավունքներն աշխարհում ապահովում են ազատության , հավասարության , արդարության և խաղաղության այս առանցքային հիմքը: Արժեքների հաջորդ այլ խումբ հիմնված է այն ընդհանուր համոզմունքի վրա, որ հարկ է դրական վերաբերվել, գնահատել ու փայփայել այլ մշակութային պատկանելիություններին, մշակութային փոփոխականությանն ու բազմազանությանը և տեսակետների, կարծիքների ու գործելակերպի բազմազանությանը: Այս համոզմունքը ենթադրում է , որ մշակութային բազմազանությունը կարևոր արժեք է հասարակության համար , մարդիկ կարող են սովորել և օգուտ քաղել այլոց բազմակարծությունից, մշակութային բազմազանությունը պետք է խթանել և պաշտպանել, պետք է ոգևորել մարդկանց, որ շփվեն միմյանց հետ ՝ անկախ մշակութային տարբերությունների մասին իրենց ընկալումներից, իսկ միջմշակութային երկխոսությունից պետք է օգտվել հասարակության մեջ որպես հավասարների ՝ միասին ապրելու ու ժողովրդավարական մշակույթը զարգացնելու համար:
Արժեքների մեկ այլ խումբ հիմնված է մի խումբ համոզմունքների վրա առ այն , թե հասարակություններն ինչպես պետք է գործեն և կառավարեն ներառյալ այն համոզմունքները, որ բոլոր քաղաքացիները պարտադիր պետք է հնարավորություն ունենան հավասար կերպով մասնակցելու հասարակությունը կարգավորող օրենքների սահմանման և ստեղծման ընթացակարգին: Բոլոր քաղաքացիները հասարակության ներսում պետք է ակտիվորեն մասնակցեն ժողովրդավարական գործընթացներին, թեև որոշումները պետք է կայացվեն մեծամասնության կողմից, սակայն նաև պետք է ապահովվել արդարացի և հավասար վերաբերմունք բոլոր տեսակի փոքրամասնությունների նկատմամբ, սոցիալական արդարությունը, անկողմնակալությունը և հավասարությունը պետք

է աշխատեն բոլոր մակարդակներում:Այսպիսով՝ պետք է հաշվի առնել, որ մշակույթն ու արժեքը չեն նույնանում, բայց և այնպես մշակույթում ստեղծված լավագույն հատկանիշը արժեքն է: Այն անհատներն ու ազգերը, ոոնք ապրում են արժեքների գերակայությամբ, բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ նվազում են արժեքները, վրա է հասնում ոգու սովը: Ոգեղենությունը պետք է հատուկ լինի բոլորին, հատկապես՝ մտավորականությանը, որը համարվում է ազգի ինտելեկտուալ խիղճը: Ամփոփելով արժեքների ուսումնասիրման տարաբնույթ ասպեկտները՝ մենք տեսնում ենք , որ արժեքների հայեցակարգի վրա հիմնված հետազոտությունները կարող են վերաբերվել մարդկային կյանքի տարբեր ոլորտներին: Արժեքները առանցքային են մարդկային մտքի , զգացմունքների և վարքագծի մեջ: Դրանք մշակույթի անքակտելի մաս են կազմում , և հետևաբար արժեքների միջմշակութային հետազոտությունները թույլ են տալիս հասկանաուլ մշակութային տվյալ ժամանակաշրջանի բնորոշ խնդիրները: Տարբեր տեսաբաններ օգտագործում են տարբեր մշակութային չափումներ ՝ ինդիվիդուալիզմ-կոլեկտիվիզմ, ֆեմինինություն մասկուլինություն, ներդաշնակություն, հավասարություն և այլն, որոնց բազմազանությունը թույլ է տալիս վեր հանել արժեքներով պայմանավորված հասարակական առանձնահատկությունների ամբողջ համախումբը[2]:

2019

2 Սարգսյան Ա.Ա.,Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում, հոդված,ԵՊՀ,Իջևան

Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը և կարևորությունը նոր սերունդների դաստիարակության գործում

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող որակական, բովանդակային բազմաթիվ փոփոխություններն իրենց անմիջական գործունեությունն են ունենում անձի ձևավորման, արժեքային համակարգի փոփոխման, սոցիալականացման վրա: Սոցիալական ինստիտուտները երբեմն դժվարանում են իրականացնել իրենց գործառույթները, քանի որ տեղի է ունեցել բարոյամշակութային արժեքների վերաիմաստավորում: Անձի սոցիալականացման տարբեր փուլերի ընթացքում խոր հակասություններ են ստեղծվում համամարդկային և ազգային, հասարակական և անձնային արժեքների միջև: Տարիքային շրջաբաժանմանը զուգընթաց փոփոխվում են բարոյամշակութային արժեքները, որոնք ուղղակիորեն արտահայտվում են անձի աշխարհայացքում, դաստիարակավածության, կրթվածության, զարգացվածության մակարդակում, վարքագծում, հաղորդակցական մոդելներում: Համաշխարհայնացմամբ պայմանավորված հասարակական արժեքների ձևավորման հիմքում ընկած քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական և այլ գործոններ երբեմն խոչընդոտում են անհատի անձի ներդաշնակ և լիարժեք ձևավորմանը: Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները: Վերջիններս մարդու խմբային ինքնության բոլոր դրսևորումներում դիտարկվում են որպես «ամենահիմնարարն ու տարողունակը»: [3]

3.Սարգսյան Ա.Ա.,Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում,
հոդված,ԵՊՀ,Իջևան, 2019:

ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ

Համառոտ ակնարկ էպոսի մասին. բանահյուսական ստեղծագործություն է,որն արդեն հուշում է էպոսի ազգային-ժողովրդական մոտիվների առկայության մասին։

Ասացողների կողմից պատմվել է 160 պատում ,որոնք իրենց վրա կրում են ասացողների անհատական մոտեցման կնիքը; Բանահավաքների կողմից գրի առնված պատումներից 60-ի հիման վրա էպոսի ստեղծման 1000 ամյակի կապակցությամբ՝ 1939 թվական, կազմվել է համահավաք բնագիրը ՝ Սասունցի Դավիթ վերնագրով;Համահավաք բնագիրը անվանվել է էպոսի երրորդ ճյուղի գլխավոր հերոսի անունով ,որը համարվում է հայ ժողովրդի հավաքական կերպարը,ազգային արժեքների ամբողջական կրողն ու ներկայացնողը։

Էպոսն ունի պատմական հիմքեր՝ հայերի պայքարն է արաբ նվաճողների դեմ։

Այսպիով ՝ հատվածաբար և օրինակներով ներկայացնեք ազգային և համամարդկային արժեքների դրսևորումները «Սասնա ծռեր» էպոսում; Ստորև ներկայացնենք էպոսի չորս ճյուղերը,որոնք կապակցված են գլխավոր հերոսների սերնդակցությամբ.

Փոքր Միեր

Ազ

Նախնիներին հիշելը	Դյուցազներգության բոլոր ճյուղերը սկսվում են նախնիներին «օղորմի» տալով. Դառնամ զօղորմի տի տանք Խանդութ խանումին. Քառսուն օղորմի: Դառնանք, զօղորմի տի տանք Թառլան Դավթին. Հազար օղորմի
Հավատին անսասան լինելը	Հայոց խաչապաշտ Գագիկ թագավորը չի համաձայնում աղջկան կնության տալու կռապաշտ խալիֆին; Նույն արժեքի կրողն էր նաև նրա դուստր Ծովինարը,որ այդպես էլ իրեն մոտ չի թողնում կռապաշտ խալիֆին;
Հայրենի երկիր վերադառնալը	Ծովինարի ջրածին որդիների փախուստը խալիֆից և ապաստանելը իրենց պապի երկրում՝ հայոց աշխարհում՝ չնայած զանազան զրկանքներին; Հայրենի տուն է վերադառնում նաև զղջացող Մեծ Միերը;
Կառուցող-շինարար ոգին	Սանասարն ու Բաղդասարը գտնում են

	բարակ առվի ակունքը և այնտեղ էլ սան-սուն քարերով կառուցում իրենց բերդը: Մեծ Միերը կառուցում է Մարութա վանքը։ Մսրա Մելիքի կողմից քանդվելուց հետո այն վերակառուցում է Սասունցի Դավիթը;Նա նաև, սարից «ջոջ քարերով գլորելով» ,կամուրջ է կառուցում,որ մարդիկ գետը չընկնեն; Հիշարժան է հայ հողագործի հետևյալ իմաստուն ու թևավոր խոսքը .«Աշխարհ գութանի մոտ կը լիանա»։
Տարեցի նկատմամբ հարգանքը	Բերդը անվանակոչելու համար դիմում են ծերունուն,ում շալակած պտտում են բերդի շուրջ,որ անուն որոշի։
Ծնողասիրություն	Սանասարն ու Բաղդասարը սպանում են խալիֆին՝ ազատելով և հայրենիք վերադարձնելով անձնուրաց Ծովինարին:
Ժողովրդասիրությունը	Ծովինարը ,հանուն իր ժողովրդի փրկության, ամուսնացավ կռապաշտ խալիֆի հետ և լքեց հայրենի տունը:
Կանացի արիությունը	Հայ կանանց արիության մասին դեռ 5–րդ դարում պատմիչ Եղիշեն է հիշատակել իր «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատության մեջ: Դեղձուն- Ծամը,Քուռկիկ-Ջալալին հեծած, քաջաբար անառիկ պահեց Սասնա տունը ,մինչև մեծացան

	տղաները: Խանդութը որքան գեղեցիկ էր,նույնքան էլ արի ու քաջ էր՝ «Առյուծն՝ առյուծ է, էղնի էգ թե որձ»:
Հայոց օջախի շարունակությունը	Արմաղանը ներեց Մեծ Միերին միայն նրա համար ,որ Սասնա տան ճրագը չմարի, և ծնվեց Սասնա Դավիթը:
Ազատատենչություն և պատվասիրություն	Սասնա հերոսները հանուն ազատության և ազգի բարօրության կռվում են թշնամու դեմ և ժողովրդին ազատում են ծանր հարկերից;Այդ *ա*րժեքն առավել դիպուկ է արտահայտվում համահավաք կերպարի՝ Սասունցի Դավթի միջոցով, Որը դեռ մանկուց չէր հանդուրժում *բռնությունը և չի ենթարկվում Մսրա Մելիքին:*
Զգայուն ներաշխարհով,խղճով և մարդասիրությամբ օժտված լինելը	Որքան էլ կռվում են թշնամու դեմ,այնուամենայնիվ Սասնա հերոսները օժտված են նուրբ հոգով,ավելի պարզ են ,չունեն խորամանկություն . Փոքր Միերը ,լսելով ծնողների մահվան լուրը,երեք օր ողբում է ծնողների գերեզմանին, Ձենով Օհանն անընդհատ զգում է Դավթին սպառնացող վտանգը
Խաղաղասիրություն,մեծահոգություն	Սանասարն ու Բաղդասարը իրենց տունը կառուցելուց առաջ կառուցում են գյուղացիների տները, Մեծ Միերը հաշտության և եղբայրության դաշինք է կնքում Մսրա Մելիքի հետ,Սասունցի

	Դդավիթը խնայում է Մսրա Մելիքի անմեղ զորքին:
Իմաստություն	Հայ ժողովրդի իմաստությունն են մարմնավորում Արտատեր պառավը,Քեռի Թորոսը,Ձենով Հովանը, որոնք, իրենց կյանքի իմաստնությամբ և փորձով օժտված,իրենց խրատներով ու խորհուրդներով օգնում են Սասնա քաջերին,կանխում նրանց սխալները և ճիշտ ուղղություն տալիս:
Հավատը,հույսը և լավատեսությունը	Սասնա հերոսները,երբ ինչ-որ փորձանքի մեջ էին հայտնվում,հիշում էին« Մարութա Բանձր Աստվածածինը» և ցանկացած դժվարությունից դուրս գալիս: Այդպես դավիթը դուրս է գալիս հորից,որի մեջ իրեն գցել էր Մսրա Մելիքը: Փոքր Միհերի կերպարի միջոցով արտացոլվում է հայ ժողովրդի լավատեսությունը:Նա հույսով փակվում Ագռավաքարում՝ հուս ունենալով .որ մի օր կվերականգնվի արդարությունը: Որոշում է դուրս գալ միայն այդ ժամանակ և հղում է հետևյալ պատգամը. Քանի աշխարհք չար է, Մեջ աշխարհքին ես չեմ մնա, Որ աշխարհք ավերվի, մեկ էլ շինվի, Երբ որ զորեն էղավ քանց մասուր

	Մի, Ու գարին էղավ քանց ընկույզ մի, Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն։

Համամարդկային արժեքները «Սասնա ծռեր» Էպոսում

Սեր	Սերն իր տարբեր կողմերով դրսևորվում է էպոսում՝ Հայրենիքի նկատմամբ Սեփական անձի նկատմամբ՝Չմշկիկ Սուլթանի կերպարը Ընտանիքի նկատմամբ Երեխաների նկատմամբ Բնաշխարհի նկատմամբ
Նվիրվածություն	Էպոսի յուրաքանչյուր հերոս իր ուրույն նվիրվածությունն ունի հայրենիքի,ընտանիքի,սեփական արժեքների նկատմամբ
Կրթություն	Սասնա հերոսներին դեռ մանկուց կրթում են՝ Մանուկ Սանասարին և Բաղդասարին

	կրթում էԾովինարի հետ Բաղդադ գնացած հայ քահանան:Մեծ Միերն էլ ,երբ դառնում է յոթ տարեկան, Էնոր վանք-վարժատուն դրին. Քիչ մի սորվավ,շնորհքով լցվավ…
Մարդասիրություն	Սասունցի Դավիթը խնայում է ծեր արաբին և Մսրա Մելիքի զորքին, Մեծ Միերը Սասունի ժողովրդին ազատում առյուծի շրջափակումից
Խոստումը պահելը	Մեծ Միերը ,իր խոստումի համաձայն,գնում է Մսըր `տեր կանգնելու Մսրին և Մսրա Մելիքի ընտանիքին, Դավիթը իր խոստումը կատարելու համար գնում է Չմշկիկ Սուլթանի մոտ, Գնում է Գյուրջիստան՝ փահլևաններին ամուսնացնելու:

Ասվածը ներկայացնենք դասի օրինակով

Դասի պլան

Թեմա	Ազգային և համամարդկային արժեքները «Սասնա ծռեր» էպոսում
Առարկա	գրականություն
Օգտագործվող դիդակտիկ նյութեր	Դասագիրք,տետր,թեմատիկ պաստառներ,համակարգիչ
Դասի ընթացք	Դասը ներկայաց ԽԻԿ-ի սկզբունքով **Խթանման փուլ՝** հարցերի միջոցով պարզել աշակերտների իմացությունը ժողովրդական բանահյուսությունից,բանահյուսական ստեղծագործությունների ժանրային

	առանձնահատկություններից: **Իմաստի ընկալում՝** ներկայացնել **Ա** մակարդակ՝ էպոսի կառուցվածքը,ստեղծման պատմությունը,համահավաք բնագիրը, գլխավոր հերոսներին,պատմական ժամանակաշրջանը: **Բ** մակարդակ՝ սահմանել պատում ,ասացող,բանահավաք եզրույթները, նշել հիմնական տարեթվերը,սահմանել պատումների և բանահավաք բնագրի տարբերությունները, թվարկել գլխավոր հերոսներին և նրանց կանանց: **Գ** մակարդակ՝ վերլուծել հերոսների բնավորությունը ,գտնել նմանություններ և տարբերություններ,առանձնացնել թափառիկ սյուժեների մոտիվներ,վեր հանել ազգային և համամարդկային արժեքները:
Վերջնարդյունք	Աշակերտը պետք է կարողանա բացատրել «արժեք» հասկացությունը, էպոսում օրինակներով ներկայացնել ազգային և համամարդկային արժեքները,փոխադարձ կապ ստեղծել հայի պատմական կերպարի հետ, տեսնել անդրադարձը նոր ժամանակներում և ազդեցությունն իր անձի վրա :
Գործողություն՝ 45 րոպե	Կարճ դասախոսություն,հարց և պատասխան,խմբային աշխատանք,հարցաշար-աղյուսակ,մեթոդներ՝վենի դիագրամ,մտագրոհ,շրջուն դասարան,միջառարկայական կապի ստեղծում ,հայտորոշիչ թեստ
Ընթացք՝խթանում 5 րոպե	Դասախոսությամբ ներկայացնել նյութը,բացատրել առաջադրանքը
Իմաստի ընկալում՝ 25 րոպե	Դասարանը բաժանել խմբերի ,յուրաքանչյուր խմբի տալ մեկ թեմա՝ «Սասնա ծռեր էպոսի ստեղծման պատմությունը»,«Ազգային արժեքներն էպոսում»,«Համամարդկային արժեքներն էպոսում»: Լսել խմբերին և քննարկել:

Անդրադարձ՝ 7 րոպե	Հայտորոշիչ թեստով ստուգել,թե որքանով թեման յուրացրին աշակերտները, և ինչ նստվածք տվեց։
Գնահատում՝ 5 րոպե	Միավորային,ձևավորող
Տնային առաջադրանք՝ 3րոպե	Աղյուսակի տեսքով ներկայացնել գլխավոր հերոսներին և նրանց միջոցով ներկայացվող ազգային և համամարդկային արժեքները

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով հետազոտական աշխատանքը, եկանք այն համոզման, որ յուրաքանչյուր ազգի բնավորություն լավագույնս դրսևորվում է նրա էպոսում,որով պետք է սովորեցնել նոր սերունդին ,դաստիարակել և համապատասխան օրինակներով կերտել նրանց ազգային բնավորությունը ,ազգային դիմագիծը:Այդ սերունդն է կերտելու կայուն և անկախ հայրենիք,որի համար կարևոր երաշխիքն է ճիշտ ազգային արժեքային համակարգի ստեղծումը և պահպանումը:Ազգային արժեքային համակարգի գլխավոր նպատակը կայացած անհատներ դստիարակելն է:

Վերջիններս այն հենասյուներն են, որոնք ապահովում են մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը:

Երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է, այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ,վարքագծային նորմեր, յուրացնելով ազգային

և համամարդկային մշակույթը: Ժամանակակից հասարակության կարևոր խնդիրներից է ազգային և համամարդկային արժեքների համադրումն ապահովելը, իհարկե առաջնային դիրքը վերապահելով ազգային արժեքներին: Մյուս տեսանկյունից հասարակությունը չի կարող զարգանալ միայն պահպանողականության հիմքի վրա, քանի որ անընդհատ գալիս է նորը՝ համալրելով եղած արժեքները: Պարզապես քայլելով ժամանակին համընթաց, հաղորդակից լինելով համամարդկային արժեքներին՝անհրաժեշտ է առաջնայնությունը տալ ազգայինին: Արժեքները առանցքային են մարդկային մտքի, զգացմունքների վարքագծի մեջ:

Ազգային արժեքների մեջ անգնահատելի է ընտանիքի դերը՝ որպես մարդկության կողմից պատմական երկարատև զարգացման ընթացքում ստեղծված մեծագույն արժեք:

Այդ օրինակը լավագույնս դրսևորվեց մեր վիպերգում՝ իր վառ օրինակներով: Ընտանիքը ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի մշակույթի կրողն է, այլև փոխանցողը:Ընտանեկան ավանդույթներն ու սովորույթներն օգնում են հայեցի դաստիարակություն տալ երեխային՝ նրա մեջ ձևավորելով ազգային ինքնագիտակցության ոգի:Ոգեղենությունը պետք է հատուկ լինի բոլորին հատկապես՝ մտավորականությանը,որը համարվում է ազգի ինտելեկտուալ խիղճը: Ընտանիքում է երեխան առաջին անգամ հաղորդակցվում մշակութային արժեքներին, յուրացնում հասարակական վարքագծային նորմեը: Երեխան ընտանիքում է ձևավորում ազգային ինքնագիտակցություն, լսում և սովորում մայրենի լեզուն, ճանաչում և պահպանում պապենական արմատները, Հայ առաքելական եկեղեցու պատկանելությունը և ազգային սովորույթները:

Արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի նաև հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը:

Յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը, ըստ որի էլ չափվում են արժեքները ու նպատակները: Սերունդները օղակ են անցյալի ու ապագայի միջև, և ապահովվում է ինչպես տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների

հաջորդականությունը և փոխանցումն հետագա սերունդներին:
Ներկա սերունդը դառնում է հայելի,որի միջով տեսնում ենք անցյալը և պատկերացնում ապագան,ուստի այդ հայելին պետք է հնարավորինս անապական ու անբիծ պահել՝ կերտելով ազգային և համամարդկային արժեքներով կերտված սերունդ-ազգ-հայրենիք: